# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԱՆՀԱՇՏ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ» ՊՈԵՄԸ

Լ.Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Էքերմանը իր «Զրույցներում»-ում հիշատակում է Գյոթեի կարծիքը բանաստեղծ Ավգուստ Հագենի «Օլֆրիդ և Լիզենա» չափածո ծավալուն ստեղծագործության վերաբերյալ: «Հրաշալի տաղանդ» է անվանում հանճարեղ մտածողն ու պոետը Հագենին, նրա պոեմից առանձնացնում որոշ կտորներ, որոնք աչքի են ընկնում գրական բարձր արժեքներով, մեծ վարպետությամբ: «Սակայն միայն առանձին հատվածներ են հրաշալի գրված, - շարունակում է Գյոթեն, - իսկ ամբողջովին վերցրած, ոչ ոքի դուր չի գալիս: Բայց դուք գիտե՞ք, թե նա որքան ուժ, որքան աշխատանք է ներդրել այդ գործի վրա, գրեթե սպառել է իրեն»[1]: Գյոթեի կարծիքով՝ Հագենի ուժը չափածո փոքր ժանրի ստեղծագործությունների մեջ էր, և խորհուրդ էր տվել նրան «միայն փոքր գործեր գրել» :

«Անհաշտ մտերմություն» պոեմը քիչ ժամանակ ու եռանդ չի խլել Պարույր Սևակից: Սակայն, իրականում, արդյունքը եղել է «հատվածային»: Միայն տարբեր հատվածներում է բանաստեղծին հաջողվել ցուցադրելու իր ուժը, իսկ ընդհանուր թերությունները պայմանավորված էին ժամանակի գրական սխեմաներին տուրք տալով, մասնավորապես «անկոնֆլիկտայնության» արատավոր տեսության տարածված պոստուլատներին ենթարկվելով: Դա նշանակում էր, որ հեղինակն ունկնդրել էր ոչ թե կյանքի ձայնին, պոեմի նյութը վերցրել էր ոչ թե կենդանի իրականությունից, այլ վերին պաշտոնական հրահանգներից: Ժամանակի ռիթմը, մարդկային հարաբերությունների իրական դինամիկան դուրս էին մնացել բանաստեղծի տեսադաշտից՝ տեղը զիջելով մտացածին ու կեղծ վիճակների, արհեստական գործողությունների:

Ընդամենը մեկ-երկու տարի պետք եղավ, որպեսզի Պ.Սևակը կարողանար համոզել ու հաստատել, որ ինքը վարպետ է ոչ միայն փոքր չափածոյի ժանրում, այլև՝ պոեմի: Ընդ որում և՛ քնարական, և՛ էպիկական:

Պոեմը գեղարվեստական լայն պլանի ստեղծագործություն է: Կռահելի է, որ այն պահանջում է իրականության խոր ճանաչողություն, նյութի տիրապետում, կառուցվածքի և ընդհանուր կապերի այնպիսի հյուսվածք, որն առավել ամբողջությամբ է վերակենդանացնում կյանքի ճշմարտությունը:

Պ.Սևակը, իհարկե, լավ գիտեր գյուղը, գիտեր ոչ միայն արտաքին տպավորականությամբ, այլև ամենօրյա շփումներով, կենցաղով, առօրեական կապերով: Սակայն այդ ամենը բավարար չէր: «Առանձնապես զգուշացնում եմ սեփական, մտացածին մեծ այուժեներ ձեռնարկելուց, - խորհուրդ է տալիս Գյոթեն. - Նման դեպքերում հեղինակը սովորաբար ձգտում է արտահայտել իրերի մասին ունեցած իր հայացքը, իսկ դա երիտասարդական տարիքում հազվադեպ է հասունացած լինում: Այնուհետև հեղինակն ինքն իրենից է բնավորություն և հայացք փոխառնում և դրանով իսկ իր ապագա ստեղծագործությունները զրկում անհրաժեշտ հրատապությունից: Եվ,

---

[1] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Ե., 1975, էջ 16:

[2] Նույն տեղում:

վերջապես, գիտե՞ք, թե որքա՜ն շատ ժամանակ է ծախսվում նյութի մտահղացման, ներքին զուգակցումների և կապերի վրա, որի համար ոչ ոք դրվատանքի խոսք չի ասում, եթե նույնիսկ հաջողվում է աշխատանքն ամբողջությամբ ավարտել» [3]:

«Անհաշտ մտերմություն» պոեմում որքան էլ նյութը լավ ծանոթ էր Պ.Սևակին, հարազատ միջավայր էր ընտրել, գյուղը և նրա մարդիկ օտար չէին նրան, սակայն իրականում թեման՝ գաղափարական և գեղարվեստական իր կոնցեպցիայով գտնված չէր, ավելի ստույգ՝ հեղինակինը չէր: Կերպարները ենթարկված էին գաղափարական մի մտադրության, որի կենսականությունը իրականության մեջ հիմք ու հենարան չուներ, չէր արտահայտում կյանքի ռեալ տեղաշարժերը: Իսկ գրական փաստերը, բնավորությունների փոխկապերը հիմնականում հարմարեցված էին նույն մտադրությանը: Պ.Սևակը ստիպված է եղել հսկայական ուժ ու ժամանակ ներդնել ստեղծագործության արհեստական թելերը միմյանց հյուսելու, կյանքի հարստության ու բազմազանության պատրանքը գոնե պահպանելու համար:

Այն հատվածներում, որտեղ բանաստեղծը ինքն իր հետ է և իր ինքնությանը չի «խառնում» գաղափարական պարտադրանքի հնարովի շերտեր, առկա են գեղեցիկ պատկերներ ու նկարագրություններ, հաջող բնանկարներ, նուրբ դիտարկումներ: Այսինքն, Պ.Սևակը իսկական ներշնչանքի ու պոետական զգացողությունների կորուստներ չի ունենում: Ահա թեկուզ առաջին գլխի մուտքը.

Միծեռնակների և սարյակների շուտասելուկից
Թորգոմն արթնացավ: Դեռ արև չկար:
Հեռվում երկինքը շառագունել էր արևածագից՝
Գծելով ծանոթ մի բնանկար:

Կաթնագույն մուժը, մացառների մեջ ծվեններ թողած,
Դանդաղ ցրվում էր այգուց ու բակից,
Լայն պատշգամբում ավելուկների հյուսերը կանաչ
Օրորվում էին մեղմիկ ու հանգիստ:

Բացվում էր օրը: Գյուղն արթնացել էր արևից առաջ:
Նոր թխած հացի բուրմունք էր գալիս:
Պարզորոշ լսվեց հորթուկին կանչող մի կովի բառաչ,
Մի բահ զրնգաց զարնվելով քարին [4]:

Պ.Սևակը գծել է վաղ արշալույսի գյուղական մի հարազատ բնապատկեր՝ թռչունների զվարթ աղմուկով, արևածագից շառագունած երկնքով, այգիներից ու բակերից դանդաղ ցրվող մուժով, հացի բուրմունքով և այլն: Փոքրիկ այս հատվածում զարմանալի մանրամասնությամբ վերակենդանացել է գյուղաշխարհի օրվա պահը այնքան կենդանի ու բնական, որ շոշափելիորեն տեսնում ես նկարն իր նրբագծերով: Պոետական չափաբանությունը, տողերի հանգավորման կանոնիկ սկզբունքը ևս վկայում են հեղինակի օժտվածությունը:

Այդպես էլ ուրիշ գլուխներում, պոեմի բազմաթիվ հատվածներում. մի քանի հերոսների դիպուկ բնութագրումները, գյուղական կենցաղի ու կոլորիտի հարազատությունը, ժողովրդական մտածողության ու խոսքի

[3] Նույն տեղում, էջ 18:
[4] Պ.Սևակ, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1973, էջ 7:

պարզության յուրովի վերարտադրությունը, նաև գեղարվեստական այլ բաղադրիչներ, «Անհաշտ մտերմություն» պոեմը դարձնում են բավականին հետաքրքիր: Համենայն դեպս՝ ինչպես ամեն մի մեծ պոետի ոչ նշանավոր գործ, այնպես էլ Սևակի այս առաջին ծավալուն չափածո կտավը, զուրկ չէ արժեքից և, անպայման, գրապատմական որոշակի նշանակություն է ստանում: Նախ, ինչպես նշվեց վերևում, «Անհաշտ մտերմությունը» տեղ-տեղ հասնում է գեղարվեստական հնչեղության և ուղղակի հուզական ներազդեցության լիցքեր է տալիս: Ապա, պոեմը ոչ սովորական տաղանդի արգասիք էր: Պ.Սևակի գրչի յուրաքանչյուր ծնունդ ինքնին մի առանձին աշխարհ է և հենց այնպես հեշտ կամ առանց ներքին գրգիռների չի հայտնվել: Բանաստեղծի հոգում եփվում էր ինչ-որ բան, երկար ու հանգամանալի զրույցի կարիք էր զգում նա, եռքը սկսվել էր, ու, թերևս, անկարելի էր ուշացումը: «Աստծո քարտուղարը» չարքի բանաստեղծություններից մեկում («Քաղցը քաղցկեղ») Պ.Սևակը այսպիսի տող ունի, որով և ավարտվում է գործը.

Ո՞ւր ես, հանգարեղ սևագրություն...[5]

Մենք, իհարկե, սևագրություն չենք համարում 1953-ին հրատարակած պոեմը: Սակայն դա չափածո ծավալուն ժանրի անդրանիկ գործն էր և պայմանականորեն յուրովի «սևագրություն» էր բանաստեղծի համար: Դրա հիմքի վրա բարձրացան նրա սիրո երգության փայլուն պոեմները, «Անլռելի զանգակատուն», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», «Եռագույն պատարագ» անգուգական կոթողները: «Անհաշտ մտերմություն» պոեմի աշխատանքները Պ.Սևակը սկսել է դեռևս 1947թ.-ից: Հրապարակի վրա չէր նույնիսկ առաջին ժողովածուն՝ «Անմահները հրամայում են»: Բանաստեղծը որոնումներ էր կատարում պոեզիայի տարբեր ժանրերում միաժամանակ: Անսպասելի չէր նրա ընտրությունը պոեմի թեմատիկ որոնումներում: Երկար ժամանակ չէր անցել Հայաստանի գրողների միության երկրորդ համագումարից: Պաշտոնական սուր քննադատությունը, ինչպես հարկն է, «դատաստան» էր տեսել բազմաթիվ հեղինակների հետ: Այդ թրի տակով անցել էին Դ.Դեմիրճյանը, Գ.Սարյանը, Խ.Դաշտենցը, Հ.Շիրազը, Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը, Ս.Տարոնցին և ուրիշ արձակագիրներ ու բանաստեղծներ: Ամենատարբեր մեղադրանքներով քննադատական «խարանի» էին ենթարկվում գրական-գեղարվեստական այնպիսի գործեր, որոնք արտացոլում էին հայ ժողովրդի պատմական անցյալը, մեր ազգային հերոսներին, որոնց մեջ պակասում էին անգուսպ փառաբանումն ու գովերգը նորօրյա կյանքի նվաճումների վերաբերյալ, կամ քիչ թե շատ «նեգատիվ» գույներով էր պատկերվում ժամանակակից իրականությունը:

Կյանքի փաստերի վավերական յուրացումները գեղարվեստական արտահայտչամիջոցներով, մարդու հոգեաշխարհում կատարվող փլուզումներն ու բեկումները խիստ հազվադեպ էին դրվում գրական շրջանառության մեջ: Համահարթվում էին իրական հակասությունները, կենսական կոնֆլիկտներն ու դրամաները:

Պ.Սևակը, որ ընդամենը մեկ տասնամյակ հետո, «Անհաշտ մտերմություն» պոեմից սկսած, պետք է դառնար իրական հակասությունների ու

[5] Նույն տեղում, հ. 2, Ե., 1972, էջ 903:

դրամաների, առավել ևս՝ մարդու ներաշխարհի ամենից խոր հետազոտող հայ պոեզիայում, չէր կարող բնականաբար, այդ էտապում անհատի պաշտամունքի ամենամոլեգին տարիներին, չկրել գրական սխեմատիզմի ու տարածված մի շարք հոսանքների ազդեցությունը: Եվ ծնվեց այս չափածո ծավալուն կտավը, որի ընդգրկուն մտահղացումն ու կառուցվածքային լուծումները, հաջողված հատվածներն ու կերպարների փոխհարաբերություններում եղած մի շարք դրամատիկ-հոգեբանական պահերը հեղինակի ինքնուրույն, նրա նոր, շողարձակող տաղանդի հավաստումն էին, իսկ գաղափարական ու գեղարվեստական վրիպումները առավելապես պոեզիայի (ընդհանրապես գրականության) համար ծանր տարիների հետևանք:

Պ.Սևակի մասին գրված հոդվածներում և այլևայլ աշխատանքներում, գրեթե անխտիր, շրջանցվել է «Անհաշտ մտերմություն» պոեմը կամ, լավագույն դեպքում, հիշատակվել որպես «կենսագրական փաստ»: Մինչդեռ ակնհայտ վրիպումները՝ ժամանակի հասարակական-պատմական երևույթների ու տեղաշարժերի գնահատման և գեղարվեստական իմաստավորման կորագծով, ուղղակի տուրքը «անկոնֆլիկտայնության» չարաբաստիկ տեսությանը, ամենևին չեն խանգարում անկանխակալ մոտեցում ունենալ հեղինակի համայնապատկերային ստեղծագործության նկատմամբ ու աննախապաշար գնահատական տալու դրա և՛ ձախողումներին, և՛ ձեռքբերումներին:

Պոեմի աշխատանքները շարունակվել են հինգ տարի՝ 1947 - 1952թթ.: Անհատի պաշտամունքի առավել մոլեգնումի տարիներն էին և գրականության մեջ «միասնական հոսանքի», գրական սխեմատիզմի, հռետորականության ու պաթետիկ ներբողների գերիշխանության շրջանը: Ամենևին էլ պատահական չէր, որ ինչպես բանաստեղծության, այնպես էլ պոեմի ժանրերը հիմնականում մտան փակուղի՝ խորապես տուրք տալով ժամանակի գաղափարական ու գեղարվեստական ընդհանուր սկզբունքներին: Արդեն հրապարակի վրա էին Ն.Զարյանի «Արմենուհի», Գ.Սարյանի «Հրաչալի սերունդ» պոեմները, մի քանի ուրիշ հեղինակների ծավալուն չափածո գործերը (Վ.Դավթյանի «Պտուտակներ», «Տուրուխանյան երկրում», Վ.Գրիգորյանի «Պոեմ հողի մասին», Գ.Էմինի «Շաքե» և այլն): Որքան էլ բազմազան թեմատիկայով այդ ստեղծագործությունները գաղափարական դիրքորոշումներով ու գեղարվեստական լուծումներով շատ նմանություններ ունեին և խորապես կրում էին տարածված դրական սխեմաների կնիքը: Ժամանակի հայ նշանավոր բանաստեղծները՝ Ն.Զարյանն ու Գ.Սարյանը չկարողացան խուսափել կեղծ կոնֆլիկտների «գայթակղությունից» և իրենց չափածո գործերում արհեստականորեն բախման ծայրաբևեռներում պատկերեցին հայը և որդու (Գ.Սարյան՝ «Հրաչալի սերունդ») կամ միմյանց սիրող երիտասարդների (Ն.Զարյան՝ «Արմենուհի»): Ընդ որում երկու դեպքում էլ հեղինակները ժամանակի հակասություններն ու մարդկային դիմանկարները անտեսելով՝ միանգամայն չինծու ու պարզունակ բախումների մեջ էին ներկայացրել հերոսներին՝ վերաձևելով նրանց անարյուն և անկենդան խոսափողների:

Նման մի բան տեղի ունեցավ նաև Պ.Սևակի հետ: Ցոթ գլխից կազմված «Անհաշտ մտերմություն» պոեմում նա «կրկնեց» ավագներին և «կոնֆլիկտի» մեջ ներքաշեց մանկության օրերից ընկեր ու մտերիմ երկու համագյուղացիների՝ կոլտնտեսության նախագահ Թորգոմին և ֆերմայի վարիչ Մկրտչին: Առաջինը զարմանալի ջանադրությամբ տարված է գյուղում

մշակույթի շենքի կառուցման տենդով, երկրորդը առաջնային է դիտում անասունների համար ֆերմայի, ձմեռանոցի շինարարությունը: Թորգոմը կարևորում է հացի արտադրությունը, Մկրտիչը՝ կաթի ու բրդի. Ֆերմայի վարիչը պնդում է «գիտության ձայնը լսել», շարժվել «ըստ գիտության պահանջների», ոչ թե ոչխարների հոտը քարայրներում պահել.

Այլ հենց գյուղում՝ արձակ ու մեծ
Ձմեռանոց շինենք հիմա...
Մեծ լուսավոր, տաք ու հարմար...[6]

Նախագահը վճռականորեն դեմ է. անփող քարայրներ գյուղի տարածքներում որքան ուզես, ինչո՞ւ պետք է ինքը «ժողովրդի կոպեկները ծուտի-պուտի բանի համար քամուն տա».

Փող չեմ կտրում, որ ձախ ու աջ
Ձամչի նման շաղ տամ, ցրեմ,
Փայինի տեղ մանեթ փոեմ[7]:

Այսպես ուրեմն, գյուղական ակո՞ւմբ թե՞ ձմեռանոց, հա՞ց թե՞ բուրդ, վար ու ցա՞նք թե՞ կով ու կաթ. ահա «անհաշտ մտերիմների» ամենօրյա վեճերի ու կռիվների շարժառիթները: Կոնֆլիկտի արհեստականությունը միանգամայն ակնառու է, և դա լավ է զգացել ինքը՝ Պ.Սևակը ու բախումը տեղափոխել մի այլ հարթության վրա. պետք են թե մեկը, թե մյուսը, գյուղացու համար անհրաժեշտություն են բոլորն էլ, սակայն որի՞ն տալ առաջնությունը.

Ձմեռանոց նախ և առաջ,
Իսկ պալատը փոքր-ինչ հետո...[8], –

համառում է Մկրտիչը: Իսկ Թորգոմը պնդում է ճիշտ հակառակը: Ըստ ժամանակի պաշտոնական հրահանգավորումի՝ կոնֆլիկտների «լուծումը» միայն կոմունիստների կուսակցական որոշումներով ու վճիռներով էր պայմանավորված, և բանաստեղծը երկու մտերիմների վեճն ավարտում է շրջանային բյուրոյի «պատմական որոշմամբ»: Թորգոմն ու Մկրտիչը համաձայնության եզրեր են գտնում, և բախումն ավարտվում է խաղաղ գրկախառնությամբ:

Ահա այսպես՝ հետպատերազմյան պոեզիայի ու արձակի շատ գործերի պես «Անհաշտ մտերմություն» պոեմում գործողությունների զարգացումը և հերոսների կերպավորման հեղինակային մեկնակետը հանգեցին «անկոնֆլիկտայնության» արատավոր տեսության վերին պարտադրանքին և, անկախ բանաստեղծի կամքից ու տաղանդից, չստացվեց այն, ինչ կարելի էր սպասել: Տարիներ անց Պ.Սևակը պոետներին պարտադրված այդպիսի վիճակները պետք է համեմատեր «այն գեշ դրության» հետ,

Երբ խոսքի քաղցը դառնում է քաղցկեղ,
Ու բառի սովը՝ ցավագարություն...[9]:

---

[6] Նույն տեղում, հ. 3, էջ 37:
[7] Նույն տեղում, էջ 38:
[8] Նույն տեղում, էջ 41:
[9] Նույն տեղում, հ. 2, էջ 202:

*Անկասկած, բանաստեղծի այս բնութագրությունը հասարակական ու գեղագիտական գիտակցության խորքային ուրիշ կտրվածքներ էլ է ենթադրում: Սակայն Պ.Սևակը ամենից առաջ չեշտում է արվեստագետի ազատության, անկաշկանդ ու անպարտադրանք ստեղծագործելու ցանկալի պարագան: Նա այն հեղինակներից չէր, որին կարելի էր շղթայել տևականորեն և ստիպել բառերը խեղդել կոկորդում, խեղճանալ խոսքի աղքատությունից կամ թաքցնել մտքերը: Երբեք: Բայց խորհրդային արգելափակոցներին ու գրաքննության կաշկանդանքներին ոչ միայն քաջատեղյակ էր, այլև անձնապես ենթարկվել էր հալածանքների ու հարձակումների: Միմյանց հաջորդող, մեկը մյուսից վատթար այդ «գեշ դրությունների» դեմ էր ուղղված և դրանց անկեղծ քողազերծումն էր Սևակի բանաստեղծական պոռթկումը.*

Նորից բառի սով,
Խոսքի խեղճություն:
Ուզում ես խոսել,
Իսկ բառե՞ր... չկան:

Եվ ինքդ տնկված ոտնաթաթերիդ,
Մի տարօրինակ լրտեսի նման,
Ականջդ ես հպում սրտիդ պատերին,
Ու... հազա՞ր ու մի անկե՞րպ, աննմա՞ն,
Տրտում ձայներից գլուխդ է պտտում:
Այսպես անտառում ծառե՞րն են փտում,
Թե՞ քարտեզներում գետերն են ստում՞
Խաղալով խշշոց, կանչ ու սահանք[10]

*Պոեզիան պետք է հեռու պահել ստից ու խաղալուց, և Պ.Սևակը երկար ու համառ է պայքարել այդ տեսակետի հաստատման նպատակամիտումով: Իսկ ահա «Անհաշտ մտերմության» ստեղծման տարիներին կամա թե ակամա ստիպված էր «խաղալ»: Մի՞թե նա չէր տեսնում Սովետաշեն գյուղի սոցիալական վիճակը, մարդկանց հոգսերն ու կարիքները: Բանաստեղծը տեսնում էր, բայց «հարկադրված էր» գունազարդելու իրականությունը, պատրանքայինը հրամցնելու իրականի փոխարեն: Ահա թե ինչ դեր է հատկացրել հեղինակը գյուղի նախագահին: Թորգոմը գյուղում կառուցում է, իբրև ակումբ, «իրականում պալատ մի շքեղ... շքեղ շինությունկամարները կոր և թևատարած, ողորկ սյունները կապույտ երանգով», որ «գյուղի կենտրոնում բազմել էր խրոխտ ու կամարագեղ»[11].*

*Թորգոմն իդեալականացվել է. «ամեն ինչում նա լավագույնն է լավի մեջ սիրում»: Եվ բանաստեղծը հերոսին վերագրում է՝ տեղի ու ժամանակի կտրվածքով ուղղակի ֆանտաստիկ պլաններ.*

Թե կառուցվելիք իր նոր ակումբը անպատնառ պիտի
Իր ձևով անշուշտ, ոչ թե մեծությամբ,
Խիստ նման լինի փառահեղ շենքին այն օպերայի,
Որ կառուցվել է մայրաքաղաքում:
Փոքրիկ մի Մասիս՝ նա պիտի ուղիղ Մասիսին նայի,
Միակը լինի ողջ շրջակայքում[12]:

---

[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, հ. 3, էջ 8:
[12] Նույն տեղում, էջ 9:

Սա դեռ քիչ է, երկու տարում Թորգոմը նպատակ ունի գյուղում ասֆալտապատ լայն փողոցներ բացել, գրասենյակ, դպրոց, հիվանդանոց, նոր հյուրանոց, բաղնիք ու պանրի գործարան կառուցել: Ամենևին էլ զարմանալի չէին հերոսի այսպիսի պլանները, քանզի գրական մթնոլորտը «չնչում» էր «հրատապ թեմաների», անիրական պատկերացումների ու լուծումների մոգոնումներով, իսկ տիրապետող մտայնությունը գուեհիկ-սոցիոլոգիզմը խրախուսում ու պաշտպանում էր նման լուծումներն ու պատկերացումները: Երիտասարդ բանաստեղծը, որ դեռ նոր էր մուտք գործում գրական ասպարեզ և չէր հաստատել իրեն, չէր կարող դեմընթաց գնալ ժամանակի հոսանքներին, կաղապարված մտածողությանը: Բնավ էլ «փորձարարություն» չէր նրա արածը: Թերևս, խորհրդային պրոպագանդը, որ այնքան փորձառու ու վաստակաշատ հեղինակների էր չեղել բնական հունից, ոգևորել էր նաև Պ.Սևակին, և նա էլ, թերևս անկեղծորեն, հավատացել էր բոլշևիկների «մոգական ուժի» ու «բացառիկ հնարավորությունների» լեգենդին: «Անհաշտ մտերմություն» պոեմում դրա հաստատման վկայություններից են պետության ու կուսակցության անունից անընդհատ խոսող հերոսների պահվածքն ու կեցվածքը, պատերազմի ու հետպատերազմյան տարիների «ամենամոդայիկ» թեմայի՝ ժողովուրդների բարեկամության անդրադարձները (Հայաստանի Սովետաշենի գյուղացի Կարոյի նամակագրությունը ռուսական Բորիսովոյի գյուղացի Սերգեյի հետ, քեռի Խեչանի ու ռուս գյուղացիների փոխադարձ հարցումները կոլտնտեսության միջին բերքատվության, դաշտապաշտպան անտառների, կեչու սերմի մասին և այլն): Իսկ ահա, կոմունիզմի մասին հայտարարություններն ուղղակի պատճենումն են նույն տարիներին ամեն օր ու ժամ հնչող ու կրկնվող լոզունգների: «Կոմունիզմին ենք մոտենում», «Իսկ թե ծով է բերք ու բարիք՝ ասել է, թե իր ոտքերով կոմունիզմը մոտ է գալիս», «Մեզ մի զեկուցում կարդա դու կոմունիզմից, որ մոտենում է, գալիս է, այո՛, յոթ մղոնանոց հսկայի քայլով», «Ուստա՛ գեղում, հոգուդ մեռնեմ, էս բոլորը ասում են էն, որ կոմունիզմ պիտի տեսնեն ինձ ու քեզ պես պառավներն էլ»:

Պոեմի ավարտն էլ, մի պատկեր-խորհրդանիշով, ազդարարում է կոմունիզմի մոտակա գալուստը.

Տարածվել է նրանց առաջ
Հորիզոնը հեռու-հեռու,
Որ այս լեռան սեգ կատարից
Թվում է, թե գալիս-գալիս,
Մոտենում է և մոտենում,
Մոտենում է, հասնում կարծես,
Ուզես՝ ձեռքով կշոշափես...[19]

Այս ամենը, ինչպես և գյուղերի մրցության, հետպատերազմյան հայ գյուղի առաջընթացի մասին հախուռն գովքը կապ չունեն իրականության հետ: Սրանք արտաքին-մակերևույթային տպավորություն են ստեղծում՝ չմերձենալով ընթերցողի սրտին: Այսպիսի մոտեցումը, բնականաբար, հաճախ իանգարել է նաև հերոսների հոգեբանության ճշմարիտ բնութագրմանը:

«Անհաշտ մտերմության» հանդեպ գրական քննադատության սառնությունը պայմանավորված էր նման կարգի թերություններով: Սակայն

[19] Նույն տեղում, էջ 113:

դրանց կողքին առկա էին բանաստեղծի մի շարք հաջողությունները, որոնք պարզապես աննկատ մնացին, կամ քննադատությունը հարկ չհամարեց դրանց մասին բարձրաձայն խոսել:

Ամենից առաջ՝ երիտասարդ բանաստեղծը ցուցաբերել էր հմտություն՝ լեզվամտածողության, աշխույժ երկխոսությունների, ժողովրդական-խոսակցական պարզ ձևերով կերպարներին շարժման մեջ դնելու հարցերում:

Նա հաճախ դիմում է կառուցվածքային տարբեր տեսակների, տարբեր գլուխներում կամ հատվածներում ընտրում բազմազան չափաբերումներ ու ռիթմեր: Նկարագրական ու պատկերային ոչ քիչ մասեր աչքի են ընկնում դիտողական նուրբ մանրամասներով: Գյուղաշխարհի բնանկարների ու կենցաղի պատկերները շնչում են կենդանությամբ ու թարմությամբ, հյուսված են բնական ու տպավորիչ գույներով: Ոչ գլխավոր հերոսներից մի քանիսը (յոթ երեխայի մայր Հեղուշը, հանգեր կապող Արտոն, բրուտ Ավոն, դարբին Գեղամը և ուրիշներ) գծված են նրբորեն:

Ընդհանրության մեջ «Անհաշտ մտերմություն» էպիկական պոեմը դրամատիկ զարգացում ունի և մի շարք առանձնահատկություններով նախանշում էր հեղինակի հնարավորությունները չափածոյի ծավալուն ժանրերում գալիք հնարավորությունների և գեղարվեստական հայտնությունների համար:

## ПОЭМА П.СЕВАКА "НЕПРИМИРИМАЯ БЛИЗОСТЬ"

Л.С.АРЗУМАНЯН

Резюме

Поэма П.Севака, плод его пятилетней работы (1947 – 52гг.), была опубликована в 1953 году.

Однако и по сей день в многочисленных статьях и исследованиях о творчестве П.Севака указанное произведение или вообще обходится стороной, или просто упоминается как "факт биографии". Это объяснимо: П.Севак отдал своему детищу много времени и сил, однако результат оказался "периодическим": лишь периодами, в отдельных отрывках, поэту удалось проявить себя в полную силу.Тем не менее поэма выявила и возможности автора в жанре объемной поэтической панорамы.